Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

267

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

Հ. Կ. Կ. ԿԵՆՏԿՈՄԻ ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ՍԵՐԻԱ № 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿՈՄ. ԿՈՒՍ. ԿԵՆՏ. ԿՈՄԻՏԵՅԻ
ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴԼԱՅՆԱՄ ՊԼԵՆՈՒՄԻ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՅԵՐԵՎԱՆ
ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
1924

Ш92
369

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

Հ. Կ. Կ. ԿԵՆՏԿՈՄԻ ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ՍԵՐԻԱ № 12

329.15(47.925)

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿՈՄ. ԿՈՒՍ. ԿԵՆՏ. ԿՈՄԻՏԵՅԻ
ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴԼԱՅՆԱԾ ՊԼԵՆՈՒՄԻ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



ՅԵՐԵՎԱՆ
ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
1924

369-449-2

№ 2293

ԲՈՆՄԶԵՎ

ԸՆԴՈՒՆՎԱԾ ԿԵՆՏԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ԱՌԹԻՎ

1. Կենտկոմի նախագահության գիծը, մասնավորապես ներկուսակցական դեմոկրատիայի իրականացման ասպարիզում, համարել ուղիղ և կատարված աշխատանքները՝ բավարար։

2. Հաշվի առնելով կուլտիսկուսիայի դրական արդյունքները՝ կուսաշխատանքների մեջ մտած աշխուժությունը կազմակերպություններում, կուսմասսայի կողմից դեպի կուսակցության թեորիան ու պրակտիկան ունեցած հետաքրքրության ուժեղանալը, միաժամանակ շեշտելով դիսկուսիայի ընթացքում յերևան յեկած տեղական կազմակերպությունների մեջ նկատված մի շարք բացասական կողմերը, վորոնք կարող են 13-րդ կոնֆերենցիայի սահմանված կուսակցության ճշգրիտ գծից հնարավոր թեքումների ճանապարհ բանալ, անհրաժեշտ համարել կուսակցության կազմի ուսումնասիրության աշխատանքների ուժեղացումը, վերջին համամիութենական 13-րդ կոնֆերենցիայի և ՀԿԿ 2 դ համագումարի վորոշումներին համաձայն կանոնավորել կուսդաստիարակչական աշխատանքը, Լենինիզմի, բայլշևիզմի տակտիկայի ու ստրատեգիայի, կուսպատմության ուսումնա-

սիրությամբ, ամրապնդելով կուսակցության ներքին կապն ու դոգումը՝ ներկուսակցական դեմոկրատիայի բանաձևի անշեղ իրականացումով։

3. Կուսակցության ազդեցությունը գյուղի վրա ուժեղացնելու և մերձեցումն իրականացնելու նպատակով շարունակել գյուղի, քաղաքի և գյուղի փոխհարաբերությունների, գյուղկոմբջիջների դրության և անկուսակցական մասսաների հետ ունեցած նրանց կապի ուսումնասիրությունը։

Անհրաժեշտ համարել գյուղխորհուրդների աշխատանքների աշխուժացումը՝ ծավալելով կոոպերատիվ-բջիջների, արտելների ցանցը, միաժամանակ ուժեղացնելով շեֆբջիջների աշխատանքները։

Գյուղում կուսակցության քաղաքականությունն ու տակտիկան անշեղ կիրառողների կադր ստեղծելու համար, կատարվելիք մոբիլիզացիայից դատ, կազմակերպել կուրսեր կոոպերատիվի ցածր բջիջների նախագահների՝ կուրսանտների ընտրությունն ուշադիր կերպով կատարելով գյուղբջիջներից։

4. Հանձնարարել Կենտկոմի նախագահությանը 1920 թ. թեկնածուներին անդամ դարձնելու համար մշակել համապատասխան միջոցներ։

Միաժամանակ խնդրել Անդրյերկրկոմին թույլ տալ անդամ դարձնել 1921 թ. այն թեկնածուներին, վորոնք ընդունված են կուսակցության մեջ մինչ քաղաքացիական կռիվները և նրա վերջանալը։

Սկսել կամպանիա 250 դաղդյահի բանվորներ կուսակցության մեջ ընդունելու համար՝ ջոկելով հատուկակամ և լավագույն բանվորներին։

5. Անհրաժեշտ համարել բանակի և ԿՅԵՄ հետ

կապի ուժեղացումը՝ ավելի ևս խորացնելով և զեկավարելով բանակի և ԿՅԵՄ կուսակցական-քաղաքական աշխատանքները։ Հանձնարարել նախագահությանը համապատասխան կազմակերպչական միջոցներ մշակել։

6. Հաշվի առնելով մի շարք դպրոցներում և համալսարանում հասարակական-քաղաքական գիտություններ սովորելու միակողմանի թերությունը, դրա առաջն առնելու և դպրոցական ու համալսարանական աշխատանքներին գործնական ընթացք տալու նպատակով հանձնարարել նախագահության մշակել հատուկ միջոցներ։

Անհրաժեշտ է անշեղ և հաստատ կուրս ընդունել գանազան ճյուղերի՝ կուսակցական, խորհրդային, մասնավորապես գյուղի համար պրակտիկ աշխատավորներ և զեկավարներ պատրաստելու իմաստով։

7. Բանվորների և գյուղացիների լայն շրջաններում ագիտ-պրոպ աշխատանքների ապագա ծավալումը նկատի առնելով՝ առաջարկել ԿԿ Ագիտբաժնին և Պետհրատին առաջիկա ամիսների ընթացքում լույս ընծայել քաղաքական, տնտեսական և հակակրոնական բովանդակությամբ ժամչելի բրոշյուրների սերիա։ «Խորհրդային Հայաստան» թերթի բովանդակությունն ուժեղացնելու համար թերթին աշխատակցելու հրավիրել պատասխանատու կոմմունիստներին, առաջին հերթին տնտեսական ասպարիզում աշխատողներին։ Հատուկ ուշադրություն դարձնել «Մանկալը» հարմարեցնելու գյուղի ժամանակակից ընթերցողի պահանջներին։

Հրատարակչության ուշադրությունը հրավիրել հրատարակվող թերթերի, բրոշյուրների և գրքերի

տեխնիկան բարելավելու գործի վրա։

8. Կանանց կենցաղը բարեկարգելու, անգործությանդեմ կռվելու և Կինբաժնի համար տնտեսական հենարան ստեղծելու նպատակով՝ ամրապնդել գոյություն ունեցող արտելները և կազմակերպել նորերը՝ Կենտկոմի Կինբաժնի ղեկավարությամբ։

9. Արձանագրելով շարքային դաշնակներիև դաշնակցական յերիտմիությանմասնայորեն քայքայվելու փաստը՝ պլենումն անհրաժեշտ և համարում խրախուսել նրանց ակտիվ մասնակցությունը խորհրդային տնտեսական և արհեստակցական աշխատանքներում, ինչպես նաև նրանց մասնակցությունը քաղխմբակների մեջ՝ նպատակ դնելով խորացնել նրանց քաղաքական գաղափարական դաստիարակությունը։

Միաժամանակ պլենումն անհրաժեշտ և համարում անհատորեն կոմ. Յերիտմիության և կուսակցության շարքերն ընդունել դաշնակցությունից գաղափարականորեն անջատված լավագույն տարրերին՝ մանավանդ բանվորներից։

10. Անհրաժեշտ համարել թուրքական լեզվի կիրառումն այն շրջաններում, վորտեղ թուրք ազգաբնակչությունը ճնշող տոկոս և կազմում։

Հ. Կ. Կ. Կ. Կ. ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

I

1. Կուսակցական մասսաների ինքնագործունեությունը բարձրացնելու և կենդանացնելու, կուսակցության մեջ տեղի ունեցող հիվանդագին յերևույթներից ազատվելու, ինչպես նաև կուսակցական ներքին կոդումն ուժեղացնելու հիմնական միջոցը ներկուսակցական դեմոկրատիային անցնելն է՝ ի կատարումն միութենական XIII-րդ կուսկոնֆերանսի վորոշման։

2. Ըստ այսմ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել Հայաստանի Կոմունիստական Կուսակցության սոցիալական կազմի վրա։ Այդ ասպարիզում կատարած մինչայժմյան աշխատանքը (Եջմիածնի և Դարալագյազի կազմակերպություններում) շոշափելի արդյունք է տվել։ Ներկուսակցական դեմոկրատիային անցնելով՝ Հայաստանի կազմակերպությունների առավել ևս առաջնագույն խնդիրն է դառնում մեր կուսակցության սոցիալական կազմի, նրա մեջ կատարվող հիվանդագին պրոցեսների ուսումնասիրության շարունակումն, ինչպես նաև նրա սոցիալական կազմի կանոնավորումն, գտումն այն տարրերից, վորոնք դասակարգային-գաղափարախոսական տեսակետից խորթ են նրան, և նրա ուժեղացումը՝ դաղդյահի բանվորների ընդունելության միջոցով։

3. Միաժամանակ հաշվի առնելով կուս-ապպարատի խոշորագույն դերը՝ անհրաժեշտ է շարունակել նրա զորեղացման աշխատանքը։ Կուս-ապպարատի անձնական

կազմի հետագա ընտրականության և վերաքննության տեսակետից անհրաժեշտ է, որ Կուսակցական Կոմիտեները թարմանան նորեկ ընկերներով, որպիսով ուժեղանա հրահանգիչների կազմը, ինչպես նաև անհրաժեշտ է, որ ԲՀՀի բյուրոն նորոգվի յուրաքանչյուր յերեք ամիսը մեկ անգամ, հաշիվ տա ԲՀՀի առջև և որպես կանոն, սահմանվի բյուրոյի դռնբաց նիստերի սիստեմը՝ նույն ԲՀՀի անդամների համար։

II

Կուս-կազմակերպչական աշխատանքի կենտրոնական տեղը պետք է գրավի ԲՀԻԸ։ Այդ նպատակով անհրաժեշտ է.

1. Այնպիսի ձևով վարել ԲՀՀի աշխատանքը, որ աշխատանքի հենց այդ պրոցեսում նրա անդամներն ու թեկնածուները կարող լինեն կուսակցական դաստիարակչություն ստանալ և ճշտորեն կերտեն կյանքում կուսակցական ծրագիրն ու գործելակերպը։ Բջիջների քննության նյութ դարձնել կուսակցական, տնտեսական, խորհրդային և արհեստակցական խնդիրները։ Առավել ևս ակտիվ մասնակցության հրավիրել բջիջներին կուսմարմինների աշխատանքի քննության մեջ։

2. Կարևորագույն խնդիրներից մեկը համարելով ԲՀՀի մասնակցությունը արտադրության բարձրացման մեջ՝ անհրաժեշտ դատել արտադրությունների մեջ քննության դնել ձեռնարկությանը վերաբերող խնդիրները։ Բջիջն այդ խնդիրները քննության նյութ և դարձնում, միաժամանակ այդ աշխատանքին գրավելով անկուսակցական վորակյալ բանվորներին և ծառայողներին։ Այս տեսակետից անհրաժեշտ միջոց-

ներից մեկը համարել ձեռնարկությունների ղեկավարների, տնտեսավարների և պատասխանատու սպեցների սիստեմատիկ ղեկուցումները՝ իրանց աշխատանքի մասին։

3. Սիստեմատիկ ղեկուցումների միջոցով, թե բջջի անդամներին և թե անկուսակցական բանվորներին և ծառայողներին անհրաժեշտ է պարզաբանել տարիֆային քաղաքականությունը, սոցապահովագրության, աշխատավարձի խնդիրները, ինչպես նաև աշխատանքի որենսդրությունը և այլն։ Անհրաժեշտ դեպքերում, բջիջները, վորպես ֆրակցիաներ, նախապես ժողովվում են և քննության են առնում խնդիրները՝ նախքան անկուսակցական ժողովի քննությանն առաջարկելը։

4. Կուսակցական բջջի այն վորոշումները, վոր գործնական առաջարկություններ են պարունակում այս կամ այն մարմնի վերաբերմամբ, պետք է ուշադրության առնվեն ղեկավար մարմինների կողմից, ստանան իրանց լուծումն կամ բացատրությունը և վոչ մի պարագայում չպետք է թողնվեն անպատասխան։

5. Խորհրդային բջիջների նկատմամբ հիմնարկների կազմակերպիչների և ղեկավարների առջև խնդիր պետք է դրվի՝ ոգտագործել խորհրդային հիմնարկներում աշխատող կոմունիստների վորձը, խորհ-ապպարատի բացասական հատկությունների դեմ պայքարելու նպատակով, մասնակից դարձնելով այնտեղ աշխատող առանձին անդամներին՝ տվյալ հիմնարկության աշխատանքի ձևի և նրա հետ կապված խնդիրների քննությանը։ Ուշադրություն դարձնել խորհրդային

աշխատավորների մեջ կուս-քաղաքական աշխատանք վարելու ձևի վրա։ Այդ աշխատանքներում նկատի ունենալ գրասենյակային ծառայողների հիմնական մասսան։

6. Գյուղբջիջների վերաբերմամբ անհրաժեշտ է, որ աշխատանքների կորիզը դառնան տեղային բնույթ ունեցող խնդիրները—(խորհուրդների, կոոպերատիվի, փոխոգնության, հողանտառմիության և դպրոցական խորհրդի գործունեությունը, գյուղատնտեսության կենդանացման խնդիրները, յերկրագործության կատարելագործված ձևերի սահմանումն, արտադրական արտելների կազմակերպությունը, Հողժողկոմի մարմիններին աջակցելու խնդիրը)։ Այս խնդիրների քննության ժամանակ անհրաժեշտ է բջջի նիստին գրավել գյուղի չքավոր տարրերին, սակայն այս չի նշանակում, թե տվյալ դեպքերում գյուղբջիջներն իրավունք չունին այդ հարցերը նախապես քննելու իրանց նիստերում։ Գավկոմները պետք է ընդարձակ կերպով ուսումնասիրեն խոշոր գյուղբջիջների փորձը, վորպեսզի ոգտագործելու տան այն թույլ բջիջներին։

III

1. Գավկոմների համար սահմանել ավելի հաճախական հաշվետվություն՝ վոչ միայն կոնֆերանսների, այլև բջիջների ընդհանուր և միացյալ նիստերի առջև։ Գավառային կոնֆերանսներ գումարել տարին յերկու անգամ անպայման։

2. Վերաքննել ամրացվածների կազմը, կատարել նոր ամրացումներ, մանավանդ գյուղբջիջների վերաբերմամբ։ Ամրացվածների աշխատանքի գնահատությունն ընդունել վորպես սիստեմ։

3. Գավկոմների և կուս-մասսայի միջև սերտ կապեր ստեղծելու նպատակով

ա) Կազմակերպել կանոնավոր և լայն ինֆորմացիա.

բ) Վորպես կանոն ընդունել բջիջների քարտուղարների խորհրդակցությունը՝ ամիսը մեկ անգամ.

գ) Ջեռնարկել կուս-կազմակերպությունների ավելի հաճախական ընդհանուր ժողովների գումարումն՝ լսելու և քննելու համար Գավկոմի, նրա բաժինների, արհկազմակերպությունների գավառային խորհրդի գործնական զեկուցումները և, մասնավորապես ավելի հաճախական դարձնել կուսակցության անդամների շրջանային ժողովները.

դ) Կազմակերպել կուսակցության գործոն անդամների խորհրդակցություն՝ քաղ-աշխատանքի հերթական խնդիրների առթիվ, ինչպես նաև խորհրդակցություն՝ կազմակերպչական խնդիրների և բջիջների աշխատանքի կենդանացման մասին.

ե) Հրավիրել հատուկ խորհրդակցության գանազան ճյուղի աշխատավորներին՝ նրանց աշխատանքին կապված խնդիրների առթիվ. մասնավորապես— կոոպերատիվ, գյուղատնտեսական և զինվորական ճուղի աշխատավորներին.

զ) Միջոցներ ձեռք առնել կուսակցական ակումբներ բանալու համար՝ դարձնելով այն կուսակցական ամբողջ մասսայի շփման կենտ-

ռոն և դիսկուսիայի միջոցով զանազան խնդիրները քննության առնելու մի վայր.

ը) Պարտավորել կոնֆերանսների և համագումարների պատգամավորներին հաշիվ տալ իրանց ընտրողների առջև այդ կոնֆերանսների և համագումարների աշխատանքի մասին.

թ) Ուշադրություն դարձնել բանթղթակիցների և կուսթղթակիցների ինստիտուտի վրա՝ կուսակցական մամուլի մեջ ուժեղացնելով կուսակցական և բանվորական կյանքի բաժինները.

ժ) Վոչ ուշ քան ամիսը մեկ անգամ գումարել հրահանգիչների խորհրդակցություններ և յերկու ամիսը մեկ անգամ—Գավկոմների պլենում։

IV

1. Ուժեղացնել Կենտկոմի ղեկավարությունը տնտեսական, արհեստակցական, խորհրդային և կոոպերատիվ խնդիրների պլանային ղեկավարության իմաստով։

2. Կենտկոմին կից մշտական և պարբերական խորհրդակցություններ կազմակերպել աշխատանքի տարբեր ասպարեզների գործիչներից՝ տնտեսական, արհեստակցական և այլն։

3. Ուժեղացնել արհմիություններում և խորհուրդներում գործող ֆրակցիաների և սեկցիաների աշխատանքը։

4. Ուժեղացնել Կենտկոմի ղեկավարությունը բջիջների աշխատանքի ավելի ընդարձակ ընդգրկումով՝ գործելով համապատասխան գավկոմների միջոցով։

5. Ուժեղացնել ինֆորմացիան, վորպես միջոց ընտրելով Կենտկոմի Կվ. Հանձնաժողովի անդամների շրջագայությունը դեպի գավառները՝ կենտրոն հրավիրելով քարտուղարներին, հրահանգիչներին, բջիջների քարտուղարներին և ուժեղացնելով կապն առանձնացված բջիջների հետ։

6. Ուժեղացնել Կենտկոմին կից գործող կազմկոլլեգիայի, ագիտկոլլեգիայի և կինկոլլեգիայի աշխատանքները՝ մատչելի դարձնելով այդ մարմինները կուսակցության պատասխանատու անդամների համար։

7. Պարբերաբար հրատակել «Կոմմունիստը»՝ հարմարեցված բջիջների քարտուղարներին։

8. Համագումարների արանքում գումարել կուսկոնֆերանսներ։ Պլենումների արձանագրություններն ուղարկել բոլոր Գավկոմներին։ Կենտկոմի պլենումը հրավիրել յերկու ամիսը մեկ անգամ՝ Գավկոմների քարտուղարների հետ միասին։

9. Հանձնարարել Բան.-Գյուղ-Տեսչությանը և Վերահսկիչ Հանձնաժողովին կազմել ԲԳՏ ժամանակ բջիջների խնդիրների նախագիծը և այնուհետև յուռանդուն պայքար մղել ամեն տեսակի խեղաթյուրումների դեմ՝ գրավելով կուսակցական ամբողջ մասսան։

10. Փոխել անձնական գործերի և անձնական ընութագրերի սիստեմը՝ հասցնելով այն առավելագույն պարզեցման։

11. Լուրջ ուշադրություն դարձնել հաշվառման և բաշխման, ինչպես նաև աշխատողներին ոգտագործելու ընույթի վրա։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ Կ. Կ. ԸՆԴԼԱՅՆԱԾ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Ամբողջովին միանալ XIII-րդ միութենական կուսակոնֆերենցիայի տնտեսական քաղաքականության հերթական խնդիրների վերաբերյալ բանաձևին։

2. Հավանություն տալ Հայաստանի Կոմկուսի Կ. Կ. նախագահության տնտեսական քաղաքականությանը։

3. Համարել ճիշտ՝ վառոդման, էլեկտրոֆիկացիայի, պետկառուցումների և անասնապահության, բամբակագործության ու գյուղատնտեսական այլ կուլտուրաների զարգացման ծրագիրը։

4. Ընդգծել գյուղատնտեսական կոոպերացիայի և կազմակերպվող Գյուղատնտեսական բանկի բացառիկ նշանակությունը, ինչպես՝ գյուղատնտեսության բարձրացման, այնպես բանվորության ու գյուղացիության մերձեցման տեսակետից. պարտավորեցնել Կ.Կ. Նախագահության ուժեղացնել կոոպերացիան տնտեսարարներով (хазяйственник)։

5. Գտնելով վոր ժամանակ է և անհրաժեշտ անցնել կայուն վալյուտայի՝ հանձնարարել Կ. Կ. Նախագահության ձեռք առնել բոլոր միջոցները՝ նախապատրաստելու պայմաններ դրամական ռեֆորմի անհիվանդագին կիրառման և այդ ռեֆորմի հետ կապված բյուջետային ու ֆինանսական հնարավոր դժվարությունները մեղմելու համար։

6. Անհրաժեշտ համարել պետապահովագրության

աշխատանքների ծանրության կենտրոն դարձնել ապահովագրության այն տեսակները, որով շահագրգռված են գյուղացիության լայն մասսաները, այն է՝ ապահովագրել կարկտահարությունից, յերաշտից, ցրտահարությունից և այլ տարերային աղետներից։

7. Մոշոր սոցիալական նշանակություն տալով ինչպես պետական, այնպես և ամերիկական վորբանոցների վորբ պատանիների կենցաղի հետագա տնտեսական կազմակենպման գործին՝ պլենումը հավանություն և տալիս կենտրոնական դպրոց-արհեստանոցի կազմակերպմանը և առաջարկում է Կ. Կ. Նախագահության արագացնել մանկական գյուղատնտեսական կոլեկտիվի կազմակերպումը և միջոցներ ձեռք առնել նրան նյութապես ապահովելու համար։

8. Վավերացնել և ընդունել Կ. Կ. հատուկ հանձնաժողովի ներկայացրած թեզիսները գյուղատնտեսության, կոոպերատիվի, պետառևտրի գյուղատնտեսական վարկի, բյուջեյի, աշխատավարձի և արդյունաբերության մասին և հանձնարարել Նախագահության վերջնականապես խմբագրելուց հետո հրատարակել վորպես Հ. Կ. Կ. Կ. պլենումի բանաձև։

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ս. Խ. Հ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

I. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Հողաշինարարության ասպարիզում անհրաժեշտ է այս տարվա ընթացքում ամբողջ Հայաստանում ավարտել հողաշինարարական աշխատանքները՝ խուսափելով մեքենայական հավասարեցումից, ի նը-

կատի առնելով գյուղատնտեսության զարգացման անհրաժեշտ կարիքները։

2. Ջրային գործի ասպարիզում. ա) անհրաժեշտ և հարմածային կարգով լուծել ջրային ցանցի վերանորոգման խնդիրը, բ) ի նկատի ունենալով, որ հողաշինարարությունն ստեղծել է թե գյուղերի և թե առանձին տնտեսությունների մեջ նոր հողային հարաբերություններ, անհրաժեշտաբար փոփոխել ջրից ոգտվելու նախկին ձևն ու կարգը՝ տնտեսության կարիքների համեմատ, գ) յելակետ ունենալով վոռոգման ծրագիրը՝ առաջին հերթին լայն մասշտաբով անցնել ճահիճների ցամաքեցման գործին, վերջացնել Եվջիլարի ու Լենինականի ջրանցքները և ձեռնարկել մյուսների կառուցման։

3. Գյուղատնտեսության ասպարիզում անհրաժեշտ է. ա) ազգաբնակության ծանոթացնել կանոնավոր սերմափոխության. բ) գյուղբանկի միջոցով տալ անհրաժեշտ ինվենտար, գ) այս տարի հիմնել փորձադաշտեր և սերմակայաններ առնվազն յերեք շրջանում դ) հատուկ ուշադրություն դարձնել ազգաբնակության լավ վորակ սերմեր բաժանելու գործին և այդ նպատակով գավառներում պահել սերմազտիչ մեքենաներ։

4. Բամբակագործության ասպարիզում անհրաժեշտ է. ա) այս տարի բամբակի ցանքսերի տարածությունը 12 հազար դեսյատինից հասցնել 16 հազարի, բ) ապահովել այդ տարածությունը ջրով, գ) ինվենտարից զուրկ տնտեսությունների վարը կազմակերպել լեռնային շրջանների ազգաբնակության և տրակտորների միջոցով, դ) Գոռխտի միջոցով բամբակագործներին վարկ տալ կարիքի համեմատ, յե)

գյուղբանկի միջոցով ձեռք բերել լծկան անասուններ բամբակագործների համար, գ) բամբակագործության շրջաններում կազմակերպել մեքենատրակտորով կոոպերատիվներ բամբակագործությանը զարկ տալու համար։

5. Այգեգործության ասպարիզում անհրաժեշտ է. ա) լայն կերպով կազմակերպել դինու արտահանումը և սպառումը՝ բանալով այդ նպատակով անհրաժեշտ վարկ, բ) ձեռք առնել միջոցներ իջեցնելու դինու ակցիզն ամբողջ Խորհրդային Միության սահմաններում, գ) հատուկ ուշադրություն դարձնել այգիների մշակման ձևերի և վնասատուներից ազատելու գործին։

6. Անասնապահության ասպարիզում. ի նկատի ունենալով, որ Հայաստանի լեռնային մասերը շնորհիվ բարձր վարակի ալպիական արոտատեղերի անասնապահության և կաթնատնտեսության համար ունին լավագույն պայմաններ, որի շնորհիվ կարելի է բարձրացնել այդ շրջանի գյուղացիության տնտեսական դրությունը, անհրաժեշտ է. ա) անասնապահական շրջաններում կազմակերպել մի քանի անասնաբուծարաններ, որոնց նպատակը պիտի լինի տեղական լավագույն ցեղերն ապնվացնել, բ) կազմակերպել կաթնատնտեսական արտելներ և նրանց կից հիմնել թե անշարժ և թե շարժական կաթնատնտեսական գործարաններ՝ լավագույն յեղանակով կաթնամթերքներ պատրաստելու համար, գ) անհրաժեշտ է աղդաբնակության ծանոթացնել կանոնավոր կերակրման յեղանակներին՝ փորձանմուշ կերակրում կազմակերպելով և խոտերի ու [illegible] փորձադաշտեր հիմնե-

ԱՐԽԻՎ

լով, գ) ուժեղ պայքար մղել անասունների տարափոխիկ հիվանդությունների դեմ։

7. Այլ կուլտուրաների ասպարիզում ա) դարկ տալ ծխախոտի մշակությանը՝ կազմակերպելով գանազան շրջաններում մի քանի փորձադաշտեր, բ) նպաստել շերամապահության զարգացմանը՝ տալով ազգաբնակության ամենալավ տեսակի սերմեր և թթենու տունկեր, գ) նպաստել մեղվաբուծության զարգացմանը։

8. Խորհրդային տնտեսություններն ընդհանուր առմամբ իրենց տնտեսությամբ պիտի ծառայեցնել իրրև փորձադաշտեր՝ ցուցադրող շրջակայքի ազգաբնակության համար։

9. Գյուղատնտեսական մանկական գաղութներ. հատուկ ուշադրություն դարձնել և հիմնել գյուղատնտեսական դաղութներ, մանկատների մեծահասակ յիրեխաների համար և դրանով նրանց կապել գյուղատնտեսության հետ։

1. Ի նկատի ունենալով ԺՏԳԽ ապարատների, տրեստների, միացյալ և առանձին տնտեսական միավորների ամրացումը՝ անհրաժեշտ համարել ԺՏԳԽ կենտրոնական ապպարատի պարզեցումն ու վերակազմությունը։

2. Ի նկատի ունենալով ծանր արդյունաբերության խոշոր նշանակությունը, պղնձի շուկայի նպաստավոր պայմանները, այլ և վարակյալ բանվորների հոսանքը դեպի դաղդյան մի կողմից, և հանրապետության տրամադրության տակ պղնձահալական արդյունաբերության բարձրացման համար կարևոր միջոցներ չլինելը՝ անհրաժեշտ համարել հարց հարուցանելու Միության առաջ Ղափանի և Ալավերդու հանքե-

բի հիմնական արդյունաբերության կանոնավոր գործունեություն նախապատրաստելու համար այժմ և յեթ անհրաժեշտ միջոցներ տալու, իսկ Միությունից միջոցներ ստանալու անհնարինության դեպքում հնարավոր համարել հանքերն այդ նույն նկատումներով կոնցեսիայով տալ։

3. Մեքենագործական արտադրության ասպարիզում հերթական խնդիր համարել ԺՏԳԽ մի կենտրոնական որդանի մեջ համախմբել բոլոր ազդայնացրած մեքենագործական ձեռնարկությունները, ինչպես մեքենաներ ու գործիքներ պատրաստելու, այնպես և դավառներում ու կենտրոնում նորոգման արհեստանոցները շինելու նպատակով։

4. Յերկաթը մոտավոր ժամանակներում սիստեմատիկ և կանոնավոր ելեքտրոֆիկացիայի յենթարկելու նկատառումով անհրաժեշտ համարել ավարտել Յերևանի շրջանային հիդրո-ելեքտրական կայարանի կառուցումը և պատրաստվել Լենինականի հիդրո-ելեքտրական կայարանի կառուցման։ Վերջացնել տեղական նշանակություն ունեցող Դիլիջանի, Ղարաքիլիսայի և Նոր Բայազետի ելեքտրական կայարանների կառուցումը և սկսել գավառային նշանակություն ունեցող մի ամբողջ շարք մանր հիդրո-կայանների կառուցումը (Աշտարակի, Սև-Քարի և այլն)

5. Պնդելով տեքստիլ գործարանի անհրաժեշտությունը և ի նկատի ունենալով, որ կա սրդեն վերջին ժամանակներում ստեղծված հատուկ ֆոնդ՝ ժամանակը համարել ձեռնարկելու Լենինականի գործարանի կառուցմանն այս տարի և յեթ։

6. «Արարատ» տրեստի հիմնական նպատակը հա-

մարել արտադրության ընդարձակումը՝ ձգտելով վոչ թե մեծ ոգուտներ ստանալու, այլ ոժանդակելու գյուղացիական այգեգործության և գյուղացիական մթերքների ռեալիզացիային, նմանապես և արդյունքների եժանացման, ըստ վորում աշխատել ռեալիզացիայի խնդրում ընդգրկել ամբողջ գյուղացիական շուկան։

II ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

7. Կաշվի արդյունաբերության ասպարեզում անհրաժեշտ համարել այդ արդյունաբերության հաջողությունների հետագա զարգացումը՝ արտադրությունը տեխնիկապես կանոնավորելու և նրա գործունեության ու շրջանառության դրամագլուխն ընդարձակելու միջոցով, վորի համար ապահովել կաշվարդին անհրաժեշտ վարկով։

8. Հաշվի առնելով, վոր տնայնագործական արդյունաբերությունը պատշաճ բարձրության վրա դնելու համար բոլոր անհրաժեշտ պայմանները կան, անհրաժեշտ համարել ամեն կերպ ոժանդակել արդյունաբերական-տնայնագործական և արտելային կոոպերատիվ արդյունաբերության ստեղծմանն ու զարգացմանը։

III ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

1. Անհրաժեշտ համարել աշխատավարձն ամենուրեք վերջնականապես չհրվան ռուբլու վերածել։

Միաժամանակ աշխատավարձի եյական քանակը պահելու նպատակով պարբերաբար թանկության աստիճանի տոկոսային հավելումներ անել հիմնական ռոճիկներին։

2. Շարունակելով պետական ձեռնարկությունների վի-

ձակի սիստեմատիկ և պլանաչափ ուսումնասիրությունը՝ ընդունել աշխատավարձն ավելացնելու տեսակետը կապելով այդ հանդամանքն արդյունաբերության բարձրացման և աշխատանքի արտադրականության աճման հետ։

3. Պետական բյուջեի հաշվին պահվող հիմնարկությունների նկատմամբ պետության ֆինանսական դրության հետագա բարելավման ու ամրացման համեմատ վերաքննել պետծառայողների տարիֆները, ավելացնելու մտքով՝ առաջին հերթին ընտրելով առանձնապես կարևոր հաստատությունները։

4. Վճռական պայքար մղել տնտեսական որդաններում աշխատավարձն ուշացնելու դեմ և ձեռք առնել նախազգուշացման միջոցներ՝ պետական ձեռնարկություններում աշխատավարձի վճարումը ձգձգելու դեմ։

5. Պրոֆմիությունների՝ արդյունաբերության մեջ մասնակցություն ունենալու հարցում պարտավորեցնել ինչպես պրոֆեսիոնալ, այնպես և տնտեսական (Хозяйственной) ընկերներին խստիվ կիրառել ՍԽՀՄ ՀԱԽ-ի ՍԽՀՄ-ի այդ մասին հրատարակած շրջաբերականը։

IV ԿՈՈՊԵՐԱՑԻԱ ՅԵՎ ՊԵՏԱՌԵՎՏՈՒՐ

1. Ի նկատի ունենալով կոոպերացիայի ու պետառևտրի բացառիկ նշանակությունը և կազմակերպչական թերությունից ու զուգընթացությունից խուսափելու նպատակով նրանց աշխատանքի շրջանակները միմիանցից զատելու անհրաժեշտությունը՝ ընդունել, վոր մոտիկ ապագայում առևտուրի ասպարիզում կոոպերացիայի կարևորագույն

անելիքն՝ ստորին բջիջների (առաջին հերթին շրջանային խանութների) ընդարձակումն և՝ գյուղացիական շուկան լայն կերպով ընդգրկելու համար, ըստ վորում նա իրեն նպատակ պետք է դնի մանրածախի ապարելիից սիստեմատիկ կերպով վանել գյուղական միջնորդ առևտրականին, կամ դարձնել նրան կոոպերացիայի տեխնիկական գործակալ։

2. Պետառևտրի մոտիկ ապագայի հիմնական անելիքը համարել մեծածախս առևտրի կազմակերպումը. այն է ա) գյուղական արդյունքների գնումն ու վաճառումը հանրապետական մասշտաբով կազմած հայթհայթման վորոշ ծրագրի համեմատ, բ) մասսայական չափերով մատակարարել գյուղական ազգաբնակության լայն սպառման մթերքներ (հացահատիկ, նավթ, աղ ճոթ, լուցկի, շաքար՝ գնելով այդ բոլորն արտադրական կենտրոններում, անմիջական կերպով, խույս տալով միջնորդական որգաններից, և գավառական ու շրջանային բաշխման պահեստները կանոնավոր ու ծրագրված կարգով ապահովելով ապրանքներով։

3 Հում նյութերի հայթհայթման (заготовки) ասպարիզում անհրաժեշտ է լիակատար կերպով համաձայնեցնել կոոպերացիայի և պետառևտրի աշխատանքները։ Այն շրջաններում, վորտեղ կոոպերացիան ի վիճակի չե հայթհայթման գործում պետական պատվերներ կատարելու, այդ գործը պետք է անցնի կոոպերացիային նրա աճման և զարգացման (ամրության) համեմատ։ Այն վայրերում, վորտեղ կոոպերացիա չկա, կամ թույլ է, Հայառը հայթհայթումը կատարում է իր ապպարատի միջոցով։

4. Ազգաբնակության մասսայական սպառման

տարկաներ ժամակարգարելու տարիդում բաշխման (базисные) պահեստները պետք է առաջին հերթին և առավելապես սորին կոոպերացիայի կարիքները հոգան՝ իրականացնելով կոոպերացիային տարվելադույն չափով ոժանդակելու քաղաքականությունը և խուսափելով մասնավոր միջնորդներից այնտեղ, որտեղ կոոպերացիան հնարավորություն ունի գյուղի կարիքները հոգալու։

5. Ինչպես վարկային հիմնարկությունների, այնպես և պետական կարևորագույն գործնական նպատակը համարել վարկավորել (դրամով և ապրանքներով) գլխավորապես նախնական կոոպերատիվները, որի համար Հայկոոպը պետք է մշակի մի շարք գլխավոր պայմանագրեր։

6. Այդ խնդիրներն իրականացնելու համար անհրաժեշտ համարել կոոպերացիան և պետականությունը համապատասխան վարկերով ուժեղացնելը։

V. ՊԵՏԲՅՈՒՋԵ

1. Ի նկատի ունենալով, որ 1923—24 թ. բյուջեն մինչև հիմա դեռ չի հաստատված և վարկերը բացվել և բացվում են մեքենայաբար՝ յենթադրելի վարկը 12-ի վրա բաժանելով, առանց հաշվի առնելու մի կողմից սեզոնային կարիքները, մյուս կողմից այդ վարկի մեջ չտեղավորվելու հետևանքով լրացուցիչ նախահաշիվների մեջ մտած կարիքները, լուրջ և կարևոր հարց համարել ամեն ամիս կազմել բյուջետային ծրագրեր՝ ժողկոմատների ամսական կարիքների հաշվառմամբ։

2. Ի նկատի ունենալով բյուջետային խոշոր դե-

ֆիցիտի հետևանք ֆինանսական ծդնաժամը և ԱԽՀՄ սահմաններում ամուր վայրաստայի անցնելու դեպքում մոտիկ ապագայում այդ ճգնաժամի հնարավոր սաստկացումը, վորն իր հերթին արժեքաղուրկ և անելու ֆեդերացիաները, անհրաժեշտ և նախահաշվի ամսական ցուցակներում՝

ա. Յեկամուտների բաժնում-ըստ կարելույն հայտնաբերել հնարավոր մուտքեր, միջոցներ ձեռք առնելով նրանց ռեալիզացիայի համար.

բ. Ծախսերի բաժնում ամեն ջանք գործ դնել պարփակվելու յենթադրելի վարկի շրջանակներում՝ ամեն կերպ աշխատելով դուրս չդալ նրա սահմաններից։

ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

1. Տեղական բյուջեն կանոնավորելու նպատակով յեկամուտների բաժնում անհրաժեշտ է.

Առաջին.— Վոր Գործկոմները ձեռք առնեն բոլոր վերջնական միջոցները՝ ոգտագործելու համար այն ֆինանսական ավտոնոմիան, վոր ապրիլի 2-ի դեկրետով արված է նրանց։

Յերկրորդ.— Բացի ապրիլի 2-ի դեկրետում մատնանշված յեկամուտի աղբյուրներից ստեղծել տեղական բյուջեի համար ամուր հենակետ հարկային յեկամուտների ուժեղացմամբ։ Այդպիսի աղբյուրներ կարող են հանդիսանալ տեղերում ստեղծվելիք ձեռնարկությունները, վորի համար հարկավոր է բանալ լայն վարկ։

Յերրորդ.— Տեղական բյուջեն ուժեղացնելու համար անհրաժեշտ է հանձնել տեղերին խոտհարքատե-

ղերը և հողաբաժանությունից հետո մնացած հողային ֆոնդերը։ Այդ հողամասերի կանոնավոր շահագործումը կարող է ֆինանսական լուրջ հենակետ դառնալ։

2. Ծախսերի բաժնում՝

Առաջին. — Անհրաժեշտ և առաջիկա տարվա բյուջեն կազմելիս ձեռք առնել բոլոր միջոցները պակասեցնելու վարչական սպառողական ծախսերն այնտեղ, որտեղ այդ հանգամանքը չի անդրադառնում տնտեսության ու շինարարության զարգացման վրա.

Երկրորդ. — Առաջիկա տարում բյուջետային միջոցները պետք է ծախսվեն ըստ ամենայնի բյուջետային ծրագրին համաձայն, որին մենք մինչև այժմ չեմք կարողացել հասնել։

VI

ՎԱՐԿ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿ

Թե գյուղական և թե քաղաքային տնտեսության մեջ նշմարվող զարգացման տենդենցները մի կողմից իսկ ամբողջ վայրատայի՝ Հերվոնեցի գոյությունը մյուս կողմից, ստեղծել են վարկային գործի զարգացման օբյեկտիվ պայմաններ։

2. Անհրաժեշտ է ձեռք առնել բոլոր միջոցները զարգացնելու առաջին հերթին Հայաստանում իշխող գյուղատնտեսության, ապա և տնտեսության մյուս ճյուղերի կարիքները հոգացող վարկային հիմնարկությունները։

3. Գյուղատնտեսական վարկի միասնական սիստեմի միջոցով Հայաստանի գյուղատնտեսական արդյունաբերությունը զարգացնելու նպատակով անհետաձգելի խնդիր համարել հանրապետական գյուղատնտեսական բանկ հիմնելը։

4. Կազմակերպվող գյուղատնտեսական բանկի անելիքներն են.

ա. Պետական միջոցների միացումն ու պլանաչափ գործադրությունը Հայաստանի գյուղատնտեսության և գյուղատնտեսական արդյունաբերության զարկ տալու նպատակով։

բ. Գյուղատնտեսության ու գյուղատնտեսական արդյունաբերության ասպարիզում գործող հասարակական ու կոոպերատիվ հիմնարկություններին ու ձեռնարկություններին յերկարատև ու կարճատև վարկով միջոցներ մատակարարելը։

գ) Գյուղատնտեսական վարկի զարգացումն ու ամրացումը՝ Հայաստանի ամեն գյուղատնտեսական վարկի հիմնարկությունների ցանցի զարգացմանը կազմակերպչական աջակցություն ցույց տալով։

դ) Հիմնել գյուղատնտեսական կոոպերատիվ ու վարկային ընկերություններ և ձեռնարկություններ ու մասնակցել նրանց գործունեության մեջ՝ վորպես հիմնադիր։

ե) Յերկրի գյուղատնտեսական կուլտուրայի մակարդակը բարձրացնելու նպատակով ոժանդակել գյուղատնտեսությանն ու գյուղատնտեսական արդյունաբերությանը՝ հողագործության ժող. կոմիսարիատի ծրագրային նախատեսումների կիրառմամբ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0835960

Ц 267
Ц 92
369